



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Հաշմանդամության խտրականությանը վերաբերող ամփոփաթեթ. Amtrak-ի կողմից տրամադրված ծառայություններ

Փետրվար, 2018թ., հրատ. #F117.10

Amtrak-ի քաղաքականությունը՝ հաշմանդամ ուղևորների համար

Amtrak-ն իր կայքէջում հրապարակել է հետևյալը, որը վերաբերում է ոչ-խտրական քաղաքականությանը՝

- Նահանգային և դաշնային օրենքների և կանոնակարգերի համաձայն, այդ թվում Հաշմանդամ ամերիկացիների մասին ակտը (ADA, Americans with Disabilities Act), Amtrak-ն արգելում է հաշմանդամության հիմքով խտրականությունը իր ծրագրերում, ծառայություններում և հասարական գործունեության մեջ:
- Amtrak-ը ողջունում է հաշմանդամ հաճախորդներին և ցանկանում է լրացուցիչ ծառայություններ տրամադրել (առանց հավելյալ վարձավճարի) նման ուղևորների (ինչպես օրինակ՝ տեղում կամ սենյակում ճաշի ծառայություններ կամ փոխադրամիջոց նստելու աջակցություն):

<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/non-discrimination-policy?content=Non-DiscriminationPolicy>

Amtrak-ը նաև հրապարակել է հաշմանդամ ուղևորներին վերաբերող հատուկ ռազմավարություններ Դրանք ներառում են՝

- Մատչելի ճամփորդական ծառայություններ
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/making-reservations-for-passengers-with-a-disability?content=MakingReservationsforPassengerswithaDisability>
- Կայարանի մատչելիություն՝
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/station-accessibility?content=StationAccessibility>
- Ուղեկցողի/սպասարկողի հետ ճամփորդություն
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/accessible-travel-with-companion-attendant?content=TravelingwithaCompanion/Attendant>
- Անվասայլակով դյուրաշարժության սարքի ծառայություններ
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/wheeled-mobility-device-services?content=WheeledMobilityDeviceServices>
- Թթվածնային սարքավորումներ
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/use-of-oxygen-equipment?content=OxygenEquipment>
- Ծառայողական կենդանիներ
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/service-animals?content=ServiceAnimals>
- Հաշմանդամ ուղևորների համար ճաշի ծառայությունների մատուցում
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/meal-services-for-passengers-with-a-disability?content=MealServiceforPassengerswithaDisability>

- Մատչելի ճամփորդության խնդրանքներ
<https://www.amtrak.com/planning-booking/accessible-travel-services/accessible-travel-request?content=AccessibleTravelRequests>

Չաշմանդամության խտրականության օրենքներ

Չաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի (ADA, Americans with Disabilities Act) II վերնագիրը և 1973թ. Վերականգնողական ակտի 504 հոդվածն (Section 504 of the Rehabilitation Act of 1973) արգելում են հանրային միավորների հաշմանդամության հիմքով խտրականությունը հաշմանդամ մարդկանց հանդեպ: II վերնագիրն առանձնահատուկ կերպով ներառում է Amtrak-ը որպես ընդգրկված հանրային միավոր, որը նշանակում է, որ այն նույնպես ընդգրկվում է 504 հոդվածի ներքո: Սակայն, ի տարբերություն շատ հանրային միավորների, որոնք ենթարկվում են Արդարադատության նախարարության կողմից մշակված կանոնակարգերին, Amtrak-ը կառավարվում է Տրանսպորտի նախարարության կողմից ստեղծված կանոնակարգերով: Գնացքի ուղուց կախված, նահանգային խտրականության օրենքները նույնպես կարող են կիրառվել, ինչպիսիք են Ունրուի քաղաքացիական (Unruh Civil Rights Act) իրավունքների ակտը:

Վարչական բողոքներ

Եթե վստահ եք, որ Amtrak-ը Ձեր հանդեպ խտրականություն է դրսևորել հաշմանդամության հիմքով, Դուք կարող եք բողոք ներկայացնել Amtrak կամ դաշնային երկաթուղային վարչության (FRA, Federal Railroad Administration) քաղաքացիական իրավունքների գրասենյակ:

Դուք կարող եք դիմել Amtrak-ի ADA համակարգողին՝ հարցում կատարելու կամ բողոք ներկայացնելու համար: ADA համակարգողին դիմելու տվյալները հետևյալն են՝ <https://www.amtrak.com/non-discrimination-policy>.

FRA-ի քաղաքացիական իրավունքների գրասենյակն այն գործակալությունն է, որը պատասխանատու է երկաթգծերում Տրանսպորտի նախարարության ոչ խտրական կանոնակարգերի

գործադրումը հարկադրելու համար: Դուք կարող եք FRA-ին բողոք ներկայացնելու հրահանգները գտնել այստեղ՝

<https://www.fra.dot.gov/Page/P0578>.

Դատավարություն

Օրենքի խախտման վերոնշյալ քննարկված դեպքերը նաև կարող են քննվել մասնավոր դատական գործի հարուցման միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը սահմանափակում են դատավարություն ներկայացնելու ժամկետը, և որ Դուք կարող եք հավանաբար կորցնել զանգատարկման իրավունքը, եթե սահմանափակումներին վերաբերող կիրառելի օրենսդրական ակտերի շրջանակում չգործեք: Ձեզնից նաև կարող է պահանջվել հայց ներկայացնել Դաշնային իրավախախտումների հայցերի ակտի ներքո՝ (Federal Tort Claims Act) խտրականության ամսաթվից սկսած վեց ամսվա ընթացքում՝ նախքան վնասների մասին դատարան հայց ներկայացնելը: Կարևոր է այդ վերջնաժամկետները քննարկել փաստաբանի հետ, եթե Դուք մտադիր եք Amtrak-ի հանդեպ դատական գործ հարուցել:

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցաշարը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Ջյուլիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Ջարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.